Հաստատում եմ՝ համայնքի

ղեկավար

# ՔԱՂՎԱԾՔ

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ

Ք. ԱՐՄԱՎԻՐ 27.07.2021 թ. ժամը՝ $10^{30}$

Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021թ. հուլիսի 27-ին կայացած թիվ 11 նիստին մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Պողոսյան
Տեղակալ՝ Ա. Գրիգորյան
Անդամ՝ Մ. Սեդրակյան
Քարտուղար՝ Ն. Խաչատրյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

Արմավիրի համայնքապետարան մուտքագրված Քնքուշ Թովմասյանի 2021 թվականի հուլիսի 22-ի թիվ 2575 դիմումը՝ Լաուրա Բաղդասարյանի թոռնուհի՝ Լիլիթ Սարգսյանի /ծնվ.՝ 25.01.2008թ./ նկատմամբ խնամակալ և դուստր՝ Սյուզաննա Բաղդասարյանի /ծնվ.՝ 21.08.2003թ./ նկատմամբ հոգաբարձու նշանակելու մասին վեց ամիս ժամկետով:

**Զեկ.՝ Ռ. Պողոսյան**

**Լսեցին** - Ռ. Պողոսյանը ներկայացրեց Արմավիր քաղաքի 21 փողոցի 13շ. 20 բնակարանի բնակիչ Քնքուշ Թովմասյանի /ծնվ. 30.11.1979./ Արմավիրի համայնքապետարան մուտքագրված 2021 թվականի հուլիսի 22-ի թիվ 2575 դիմումը այն մասին, որ Լաուրա Բաղդասարյանը ժամանակավոր մեկնել է ՌԴ և թոռնուհի՝ Լիլիթ Սարգսյանը /ծնվ.՝ 25.01.2008թ./ և դուստր Սյուզաննա Բաղդասարյանը /ծնվ.՝ 21.08.2003թ./ մնացել են առանց ծնողական խնամքի:

Ուստի դիմումատուն խնդրում է իրեն նշանակել հոգաբարձու Սյուզաննա Բաղդասարյանի /ծնվ.՝ 21.08.2003թ./ և խնամակալ Լիլիթ Սարգսյանի /ծնվ.՝ 25.01.2008թ./ նկատմամբ վեց ամիս ժամկետով:

Դիմումին կից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Քնքուշ Թովմասյանի անձնագրի պատճեն
3. Սյուզաննա Բաղդասարյանի անձնագրի պատճեն
4. Լիլիթ Սարգսյանի ծննդյան վկայականի պատճեն
5. Ժաննա Սարգսյանի Մահվան վկայականի պատճեն
6. Լիլիթ Սարգսյանի դպրոցից տեղեկանք
7. Սյուզաննա Բաղդասարյանի ուսման վայրից տեղեկանք
8. Սյուզաննա Բաղդասարյանի և Լիլիթ Սարգսյանի կողմից տրված համաձայնագրերը
9. Ընտանիքի կազմի մասին տեղեկանք
10. Լաուրա Բաղդասարյանին խնամակալ նշանակելու մասին որոշում

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1.Սույն արձանագրությունը ներկայացնել Արմավիր համայնքի ղեկավարին՝ Քնքուշ Թովմասյանին /ծնվ. 30.11.1979./ նշանակել Լիլիթ Սարգսյանի /ծնվ.՝ 25.01.2008թ./ նկատմամբ խնամակալ և Սյուզաննա Բաղդասարյանի /ծնվ.՝ 21.08.2003թ./ նկատմամբ հոգաբարձու վեց ամիս ժամկետով:

2.Միջնորդել համայնքի ղեկավարին՝ հաստատելու հանձնաժողովի որոշումը:

**ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Պողոսյան

Քարտուղար՝ Ն. Խաչատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2021 թվականի N 539-Ա

## ՔՆՔՈՒՇ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԵՎ ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 27-ի թիվ 11 նիստի արձանագրությունը և քաղաքացի Քնքուշ Ազատի Թովմասյանի 2021 թվականի հուլիսի 22-ի թիվ 2575 դիմումը, **որոշում եմ՝**

1. Քնքուշ Թովմասյանին նշանակել խնամակալ Լիլիթ Արմենի Սարգսյանի (ծնվ. 25.01.2008թ.) նկատմամբ վեց ամիս ժամանակով:
2. Քնքուշ Թովմասյանին նշանակել հոգաբարձու Սյուզաննա Դերենիկի Բաղդասարյանի (ծնվ. 21.08.2003թ.) նկատմամբ՝ մինչև վերջինիս չափահաս դառնալը:
3. Քնքուշ Թովմասյանին վերապահել ի շահ իր խնամարկյալի, առանց հատուկ լիազորագրի կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:
4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ՝ ՀՀ վարչական դատարան:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է սույն որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2021թ. հուլիսի 26
ք. Արմավիր